ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

*<<16>> մայիսի 2016թվական* **N_29**

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի հինգերորդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալճի գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 16-ի N 5 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*Ավագանու անդամների քվեարկությունը՝*

*Կողմ՝*
Ասրյան Հ.____________________
Մարկոսյան Ա.____________________
Մկրտչյան Ա.____________________
Նաջարյան Վ.____________________
Նաջարյան Մ.____________________
Ռիսուբով Ս.____________________

*Չի մասնակցել՝*
Հովհաննիսյան Կ.____________________
Դավրեշյան Ա.____________________

Համայնքի ղեկավար՝ ____________________
/ստորագրություն/

Կ. Տ.

*2016 թվականի մայիսի<<16 >>*
*գ. Ակնալիճ*

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼՃԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ <<16>>-Ի
N 29 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼՃԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16 -Ի N 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ ՄԻՍԱԿՅԱՆ/

**2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ ՄԻՍԱԿՅԱՆ/

**3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ ՄԻՍԱԿՅԱՆ/

4.ԱԿՆԱԼՃԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22 -Ի N 55 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ ՄԻՍԱԿՅԱՆ/

5.ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ ՄԻՍԱԿՅԱՆ/

**6.ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ ՄԻՍԱԿՅԱՆ/

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

---

*<<16>>մայիսի 2016թվական* **N30_**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը,

Ակնալիճ համայնքի ավագանին որոշում է.

1. «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունում 0.68 տոկոս մասնաբաժնով (1134 հատ հասարակ (սովորական) բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ 10000 դրամ անվանական արժեքով) համայնքային սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

2. Առաջարկել Ակնալիճ համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունում համայնքի կողմից տնօրինվող բաժնետոմսերի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ կնքելով բաժնետոմսերի նվիրատվության մասին պայմանագիր:

*Ավագանու անդամների քվեարկությունը՝*

*Կողմ՝*
*Ասրյան Հ.*
*Մարկոսյան Ա.*
*Մկրտչյան Ա.*
*Նաջարյան Վ.*
*Նաջարյան Մ.*
*Ռուստամով Ս.*

*Չի մասնակցել՝*
*Հովհաննիսյան Կ.*
*Դավրեշյան Ա.*

Համայնքի ղեկավար՝ ______________________
*/ստորագրություն/*

**Կ. Տ.**

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ*
*ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ*

*<<16>>մայիսի 2016թվական* N31_

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 1851-Ն որոշման,

**ավագանին որոշում է՝**

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի:

2. **Գույքի գտնվելու վայրն է՝** Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Ակնալիճ համայնք,

**Գույքի ծածկագիրն է՝** **0166-0015 և**
**Գույքի մակերեսը՝** **11416մք**
**Գույքի նպատակային նշանակությունը՝** ______________________________
**Հողամասի գործառնական նշանակությունը՝**______________________________:

*Ավագանու անդամների քվեարկությունը՝*

*Կողմ՝*
*Ասրյան Հ.*______________
*Մարկոսյան Ա.*______________
*Մկրտչյան Ա.*______________
*Նաջարյան Վ.*______________
*Նաջարյան Մ.*______________
*Ոսկուբով Ս.*______________

*Չի մասնակցել՝*
*Հովհաննիսյան Կ.*______________
*Դավրեշյան Ա.*______________

Համայնքի ղեկավար՝ ______________________________
*/ստորագրություն/*

**Կ. Տ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼՃԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

16մայիսի 2016թվական            թիվ 32 –Ն

## ԱԿՆԱԼՃԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22 -Ի N 55 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Որոշում է՝

1. Ակնալճի գյուղական համայնքի 2015 թվականի դեկտեմբերի 22 -ի ,, 2016թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին ,, թիվ 55 -Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի և հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*Ավագանու անդամների քվեարկությունը՝*

*Կողմ՝*   *Ասրյան Հ.*____________________
*Մարկոսյան Ա.*____________________
*Մկրտչյան Ա.*____________________
*Նաջարյան Վ.*____________________
*Նաջարյան Մ.*____________________
*Ռուսուբով Ս.*____________________

*Չի մասնակցել՝*

*Հովհաննիսյան Կ.*____________________
*Դավրեշյան Ա.*____________________

*Համայնքի ղեկավար՝* ____________________________
*/ստորագրություն/*

**Կ. Տ.**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ակնալճի
գյուղական համայնքի ավագանու
2016թվականի մայիսի 16-ի
N նիստի N32-Նորոշման

ԱԿՆԱԼՃԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22 -Ի N55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

1.Ակնալճի գյուղական համայնքի 2015 թվականի դեկտեմբերի 22 -ի „ 2016թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին „ թիվ 55-Ն որոշման մեջ կատարել փփոխություն

1/ Ֆոնդային բյուջեի մասով՝

պակասեցնել՝

| Բաժին | խումբ | դաս | հոդված | գումար հազ. Դր. |
|---|---|---|---|---|
| 08 | 2 | 3 | 5131 | 900.0 |

ավելացնել՝

| Բաժին | խումբ | դաս | հոդված | գումար հազ. Դր. |
|---|---|---|---|---|
| 06 | 2 | 1 | 5113 | 900.0 |

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
### ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
### ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

*<<16>>մայիսի 2016թվական* **N33**

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ավագանին որոշում է՝

1.Դժբախտ պատահարի հետևանքով մահացած երեխայի ընտանիքին՝ Հովհաննես Ներսիսյանին հատկացնել 100.0հազ.դրամի օգնություն:
2.Կամավորական սկզբունքով Արցախ մեկնած թվով 6 երիտասարդների ընտանիքների տալ դրամական օգնություն՝ ընդամենը 490.0հազ.դրամ գումար՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*Ավագանու անդամների քվեարկությունը՝*

*Կողմ՝* Ասրյան Հ.________
Մարկոսյան Ա.________
Մկրտչյան Ա.________
Նաջարյան Վ.________
Նաջարյան Մ.________
Ռուստամով Ս.________

*Չի մասնակցել՝*
Հովհաննիսյան Կ.________
Դավթյան Ա.________

Համայնքի ղեկավար՝ ________________
*/ստորագրություն/*

**Կ. Տ.**

*ՀԱՎԵԼՎԱԾ N1*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼՃԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ*
*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ*
*2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ <16>>-Ի*
*N 33 ՈՐՈՇՄԱՆ*

*Ցուցակ*

Կամավորական սկզբունքով Արցախ մեկնողների

| | |
|---|---|
| Մանուկյան Արշակ | 70.0 |
| Միսակյան Արմեն | 70.0 |
| Կնյազյան Մնացական | 70.0 |
| Ղազարյան Ալբերտ | 70.0 |
| Տեփանյան Լևոն | 70.0 |
| Գասպարյան Շահեն | 40.0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«_16__» մայիսի 2016 թվականի

N_34__

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33.1-ին հոդվածի 3-րդ կետով, 54.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 69-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 13 և 14 հոդվածները և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 3-րդ կետը,

***Ակնալիճ համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*Ավագանու անդամների քվեարկությունը՝*

*Կողմ՝* *Ասրյան* Հ.______
*Մարկոսյան* Ա.______
*Մկրտչյան* Ա.______
*Նաջարյան* Վ.______
*Նաջարյան* Մ.______
*Ոհսուբով* Ս.______

*Չի մասնակցել՝*
*Հովհաննիսյան* Կ.______
*Դավրեշյան* Ա.______

Համայնքի ղեկավար՝ ______
*/ստորագրություն/*

**Կ. Տ.**

Հավելված
Ակնալիճ համայնքի ավագանու
«_16_»մայիսի 2016 թվականի
N34 որոշման

# ԿԱՐԳ

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են տեղական ինքնակառավարմանն առնչվող՝ համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների (այսուհետ՝ իրավական ակտերի), ինչպես նաև համայնքի կառավարմանն ու զարգացմանն առնչվող կարևորագույն նախաձեռնությունների և հարցերի (այսուհետ՝ համայնքային հարցեր) հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների (այսուհետ՝ հանրային քննարկումների) կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման և համայնքի ավագանուն դրանց վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Հանրային քննարկումների նպատակը իրավական ակտերի նախագծերի և համայնքային հարցերի մասին շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկման, ինչպես նաև նրանցից կարծիքների հավաքագրման աշխատանքների իրականացումն է:

3. Հանրային քննարկումների հիմնական խնդիրներն են՝
   1) քննարկման դրված նախագծերի կամ հարցերի վերաբերյալ հանրային կարծիքի բացահայտումը, այլընտրանքային տարբերակների, հնարավոր ծախսերի, օգուտների և հավանական ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների ստացումը.
   2) իրավաստեղծ և համայնքային զարգացման աշխատանքներում հասարակության մասնակցության ապահովումը:

4. Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման սկզբունքներն են՝
   1) մասնակցայնությունը.
   2) մատչելիությունը.
   3) հրապարակայնությունը.
   4) թափանցիկությունը: